ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

29.09.2025Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երևան

2025 թվականի սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Մարիամ Գալստյանը, Արամայիս Փաշինյանը, Արմեն Մարուխյանը, Լիլիթ Ալեքսանյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. Պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների խախտման ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանքների ներկայացում և վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների ներկայացում,
2. Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման ժամկետների և նոր նշանակված պաշտոնատար անձանց մշտադիտարկման հետ կապված հարցերի քննարկում,
3. Վարքագծի կանոնների խախտման առկայության մասին Հանձնաժողովի նախկին եզրակացությունը վերանայելու հարցի քննարկում:

Հանձնաժողովի անդամ Արամայիս Փաշինյանը առաջարկեց նիստի հրապարակային հատվածում ավելացնել իր համակարգման ոլորտներում առկա ընթացիկ խնդիրների վերաբերյալ հարցը:

Հանձնաժողովի անդամ Լիլիթ Ալեքսանյանը առաջարկեց նիստի ոչ հրապարակային հատվածում քննարկել հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից բանավոր զեկուցվող հարց:

Օրակարգի առաջին հարցի շրջանակներում Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից ներկայացվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Արմեն Սմբատյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները, որի ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշեց կրկին պարզաբանում պահանջել Արմեն Սմբատյանից և հիմնական պայմանագրի ներկայացման անհնարինության պարագայում ներկայացնել դրա առկայությունը հիմնավորող այլ փաստաթղթեր:

Ներկայացվեց էկոնոմիկայի նախարարի տեղակալ Էդգար Զաքարյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները, որի առնչությամբ Հանձնաժողովը որոշեց կրկին պարզաբանում պահանջել Էդգար Զաքարյանից՝ պահանջելով ընկերության 2025 թվականի ընդհանուր ժողովի արձանագրությունը:

Ներկայացվեցին Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանի վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և առերևույթ խախտման առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:

Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչությունը ներկայացրեց անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող նորանշանակ անձանց ցանկը և, հաշվի առնելով 2025 թվականի անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման պլանով սահմանված ժամկետները, Հանձնաժողովը որոշեց ամփոփել 2025 թվականի անհամատեղելիության պահանջների մշտադիտարկումը՝ սուբյեկտների ցանկում ներառելով մինչև սույն թվականի օգոստոսի 1-ը նշանակված պաշտոնատար անձանց:

Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում իրաականացվել էր նաև Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքների ներկայացումից հետո Հանձնաժողովը որոշեց ավարտել ուսումնասիությունը:

Օրակարգի երրորդ հարցի շրջանակներում ներկայացվեցին նախկին Ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ Արամ Հովհաննիսյանի նկատմամբ Հանձնաժողովի ընդունած եզրակացությունը և Արամ Հովհաննիսյանի կողմից դատարանում վերջինիս վիճարկման արդյունքները, որի քննարկման շրջանակներում Հանձնաժողովն արձանագրեց, որ հաշվի առնելով, որ Ա.Հովհաննիյանը ՀՀ վարչապետի՝ 2025 թվականի հունիսի 2-ի թիվ 472-Ա որոշմամբ ազատվել է ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնից և ոստիկանությունում ծառայությունից՝ վերջինս այլևս Հանձնաժողովի իրավասության ներքո ընդգրկված սուբյեկտների շրջանակում ընդգրկված չէ: Ըստ այդմ, Հանձնաժողովն իրավասու չէ նրա վարքագծի վերաբերյալ նոր եզրակացություն

ընդունել՝ վերանայելով 2024 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 10/2024-Վ/Վ եզրակացությունը:

Բացի այդ, Հանձնաժողովի նիստին արձանագրվեց, որ Ա.Հովհաննիսյանի բողոքի հիման վրա ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը կայացվել էր դատավարական սխալներով, ինչից ելնելով՝Հանձնաժողովը որոշեց նշված վճիռը կայացրած դատարանի կազմի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու անհրաժեշտության վերաբերյալ գրություն ներկայացնել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով:

Հանձնաժողովի անդամ Արամայիս Փաշինյանը ներկայացրեց Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությունում առկա խնդիրները, որի շրջանակներում քննարկվեց սույն թվականի նոյեմբերի 19-ին պանելային քննարկում կազմակերպելու հարցը: Հարցի քննարկման արդյունքում Հանձնաժողովը որոշեց Հանձնաժողովի կազմավորման օրվա ընդառաջ կազմակերպել պանելային քննարկում՝ մասնակցության հրավեր ուղարկելով գործընկեր պետական մարմիններին և տեղական ու միջազգային կազմակերպություններին:

Ա. Փաշինյանի կողմից ներկայացված հաջորդ հարցը վերաբերում էր Հանձնաժողովի ողջ անձնակազմի հետ պարբերաբար քննարկումներ ունենալուն, որի նպատակն է բարելավել ներքին հաղորդակցությունը, անձնակազմի իրազեկվածությունը Հանձնաժողովի բոլոր վարչությունների աշխատանքներին, նպաստել գործընկերային և թիմային աշխատանքի բարելավմանը և առավելապես կրում է ոչ ֆորմալ բնույթ: Հարցի շրջանակներում որոշվեց յուրաքանչյուր Հանձնաժողովի հրապարակային նիստի ավարտից հետո ողջ անձնակազմի ներկայությամբ յուրաքանչյուր վարչությունների կողմից ներկայացվեն վարչության աշխատանքային փոփոխությունները: Մեթոդական աջակցության վարչության ընթացիկ աշխատանքների վերաբերյալ քննարկման ընթացքում քննարկվեց վարչությանը պատկանող հաստիքների համալրման հարցը, այդ թվում նաև նոր հաստիքների հատկացման հարցը:

Օրակարգում ներառված հարցերի քննարկման արդյունքներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ

1. Յուրաքանչյուր հրապարակային նիստի ավարտից հետո ողջ անձնակազմի ներկայությամբ յուրաքանչյուր վարչությունների կողմից ներկայացվեն վարչության աշխատանքային փոփոխությունները:
2. Արմեն Սմբատյանից կրկին պարզաբանում պահանջել և հիմնական պայմանագրի ներկայացման անհնարինության պարագայում ներկայացնել դրա առկայությունը հիմնավորող այլ փաստաթղթեր:
3. Էդգար Զաքարյանից կրկին պարզաբանում պահանջել ՝ պահանջելով ընկերության 2025 թվականի ընդհանուր ժողովի արձանագրությունը:

4. Վարդան Ղուկասյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:

5. Ամփոփել 2025 թվականի անհամատեղելիության պահանջների մշտադիտարկումը՝ սուբյեկտների ցանկում ներառելով մինչև սույն թվականի հուլիսի 31-ը նշանակված պաշտոնատար անձանց:

6. Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում Միեր Գրիգորյանի վերաբերյալ իրականացրած ուսումնասիրությունն ավարտել:

7. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով գրություն հասեցագրել՝ թիվ ՎԴ/13788/05/24 վարչական գործով 2024 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը կայացրած դատարանի կազմի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու անհրաժեշտության վերաբերյալ:

8. Հանձնաժողովի կազմավորման օրվա ընդառաջ կազմակերպել պանելային քննարկում:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**